ընդունելության մասին միայն, բայց վոչ ինչ բուն գործի, վոր պետք է Որին գրեր։ Կուրֆյուրստի պատասխանը ցարին ստացվում է 1702 թ. սեպտեմբերի 21-ին*, ուր յուր շնորհակալությունն է հայտնում, Որիի գործին ոգնելու հակումն ցույց տալու համար. գալիս է և մելիքների պատասխանը, վորոնց տեղեկացրել եր Որին ցարի պատրաստակամությունը ոգնելու։ Մելիքները ուրախություն են հայտնում և հնազանդություն՝ յինթարկվելու նորա հրամաններին, իրենց հույսը նրա և Աստուծո վրա դնելով**

Այժմ Որին վորոշում է Գերմանիա գնալ, և այն տեղից կուրֆյուրստի ու կայսեր կողմից իբրև դեսպան Պարսկաստան անցնել, խնդրելով Գոլովինին և ցարին տալ իրեն գնդապետության աստիճան, վոչ սնափառության, այլ գործի հաջողության համար։ Գերմանիայից նա հետը կվերցնե ճարտարագետներ և սպաներ, վորոնք կծանոթանան յերկրի դրության և ճանապարհներին, մելիքներին ել վստահություն կներշնչե և միջոցներ կհայթայթե, և մաս-մաս յերիտասարդներ ուղարկելով Ատրախան, վերադարձից հետո նրանց կկրթե վորպես ուղեցույցներ և ոգնական ապագա արշավանքին։ Նա ստանում է յուր խնդրած աստիճանը, և ապա ցարի թղթերով կայսեր և կուրֆյուրստի անունով, 1704 թ փետրվարի 10-ին անցնում Գերմանիա[1], տանելով և Արջիլի նամակները կուրֆյուրստին և Լեոպոլդ կայսեր՝ միջնորդել Շվեդների ձեռքը գերի ընկած յուր վորդուն ազատելու համար[2]։ Վիեննայում Որին ներկայանում է կայսեր. այնտեղ եր և կուրֆյուրստը. թեպետ կայսրը պատվիրում է հրովարտակ գրել շահին, բայց կոմս Կաունիցը ձգձգում է, մինչև ինքը կուրֆյուրստի հետ Դյուսելդորֆ է անցնում։ Այստեղ կուրֆյուրստի միջնորդությամբ և նորա խոստովանահոր ձեռքով հաջողվում է պապից դեսպանության թուղթ ստանալ շահի անունով, ի վերջո նաև կուրֆյուրստի կողմից, բայց առանց սպաներ և ճարտարագետներ ստանալու, ինչպես և գնդեր կուրֆյուրստի և կայսեր կողմից[3]։ Ապագա արշավանքը պիտի կատարվեր միայն ռուսաց զորքով։

Որին վերադառնում է Մոսկվա 1706 թ. հոկտեմբերի վերջերին. հայտարարությամբ խնդրում է ցարից դեսպանության թուղթ տալ շահին, ուր պիտի առաջարկվեր Արջիլին հաստատել իշխանության մեջ և քրիստոնյաներին պաշտպանություն ցույց տալ նահանգապետների բռնությունների դեմ։ Արջիլի հաստատությամբ, հայերի և վրացիների դաշնակցությունը շատ ոգտակար կլինի Պարսից ու Տաճիկների դեմ մղվելիք պատերազմների ժամանակ. խնդրում է ցարից տալ և մի քանի սպաներ և գրագիրներ յերկրի ուսումնասիրության և նկարագրության համար. կրկնում է և Ատրախանում հայերից գունդ կազմակերպելու ծրագիրը։ Բայց ցարը շահին թուղթ է գրում Որիին վորպես պապի դեսպանի ընդունելու, խնդրելով նաև դեպի քրիստոնյաները ուշադիր լինել*։ Այս մի նախազգուշություն եր ցարի կողմից շահի մեջ կասկած չհարուցանելու և անհաջողության դեպքում վարկաբեկ չլինելու համար։

Որիի դեսպանությունը բաղկացած եր 50 հոգուց զանազան տեսակի պատրաստության և արհեստի տեր մարդկանցից, լեռնային 12 թնդանոթով. վերցրել եր և 22,000 ր. արժողությամբ Ամստերդամում ձեռք բերված զենքը յուր ապագա գնդի համար։ Որին 1707 թ. արդեն Շամախուն է, ուր ստիպված եր սպասել մինչև շահից թույլատվություն կստանար։ Այս հապաղման պատճառը մասամբ ազվանական իշխան Միր Վայսն եր, վոր տեղեկացրել եր շահին Որիի դեսպանության կասկածելի բնույթը, ինչպես և ֆրանսիական դեսպանն ու միսիոնարները, վորոնք վտանգ են տեսնում այժմ ռուսական ազդեցության աճմամբ և Որիի դալբատյամբ**։ Իվերջո շահը թույլ տվեց Որիին շարունակել յուր ճանապարհը և մեծ շքեղությամբ ընդունեց նորան։

Որիի գործունեության նկատմամբ Պարսկաստանում մանրամասնություններ չգիտենք, բացի յուր դեմ յեղած ինտրիգների և քաղաքական կացության վերաբերյալ տված մի քանի տեղեկություններից. մենք չգիտենք, նաև, թե ինչ խորհրդակցություն ունեցավ նա մելիքների հետ, բայց Որին իրագործեց յուր խոստումը Հայաստանից ցարին պատգամավորություն տանելու նկատմամբ. նորա հետ եր Գանձասարի Յեսայի կաթուղիկոսը յերկու յեպիսկոպոսների հետ, գործի ապագա շարունակության գլխավոր աշխատավորներից մեկը[1]. նա տեսակցել եր նաև Եջմիածնի Աղեքսանդր կաթուղիկոսի հետ և ցարի անունով կոնդակ գրել տվել, թեև այստեղ ևս պարզ չէ կաթողիկոսի բռնած դիրքը դեպի հարուցված խնդիրը[2]. Նա գնել եր ընտիր ձիեր ցարի համար և պարսկական ապրանք, գորգեր, ազնիվ գինի, շերամ, հետը տանում եր մետաքսագործ վարպետներ[3]։ Նա բերել եր շահի պատասխանները պապին, և ցարին. առաջինի բովանդակությունը չգիտենք, իսկ ցարին պատասխանում է, վոր ընդունել է Որիին և խոստանում է անհնազանդ քրիստոնյաներին չպատժել, դիջելով ցարի խնդիրներին[4]։ Քաղաքա-

* Эзов. № 82.

** № 98. Մենք տեսանք, վոր Աշոտ Հովհաննիսյանը այս (Հայ-ռուս Որենտացիալի ծագման խնդիրը) և նորա հետ մի քանի թղթեր կեղծ է համարում. տես յեր. 271—2 սույն գրքի մեջ։

[1] Эзов. № 105. 106. 108. 110. 116. 118. 121. 123։

[2] Эзов. № 126. 127.

[3] Эзов № 139. 135։ Պապի թղթի մասին տես և Ալիշան. Սիսական. 402։

* Эзов. № 141. 143։

** Эзов. № 171 և Введение XXX. XLIV։ Aschot Ichannissjan. Israel Ory 135 և շար.։

[1] Эзов. № 167.—205.

[2] Աշոտ Հովհաննեսյան Հայ-ռուս որիենտացիալի ծագման խնդիրը. Եջմիածին. 1921. Հավելված № 5.

[3] Эзов. № 167, 169. 180, 190 193.

[4] Эзов№ 161. 200. 201.